



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՑԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդի
կողմից

30.11. 2017 թ. (արձ. № 3)

Վավերացնում եմ
ՀԱԱՀ ռեկտոր
_____ Ա. Թարվերդյան

01.12. 2017 թ.

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տերմիններ և հասկացություններ

Հակակոռուպցիոն քաղաքականություն՝ կոռուպցիային արդյունավետ հակազդեցությանը և նրա կանխարգելմանը, կոռուպցիոն ռիսկերի ծագմանը նպաստող պատճառների և պայմանների վերացմանը ուղղված իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հետևողական գործունեություն:

Կաշառք՝ պաշտոնատար անձին անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար դրամական միջոցներ, գույք, գույքի նկատմամբ իրավունքներ, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը, առաջարկելը կամ տրամադրելը, իր կամ իր ներկայացրած անձանց օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելը (չկատարելը) կամ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելը (չկատարելը) նպաստելով ծառայության գծով հովանավորչությանը կամ թողտվությանը:

Շահերի բախում՝ իրավիճակ, երբ բարձրաստիճան պաշտոնատար անձը կամ հանրային ծառայողն ունի իր, իրեն փոխկապակցված անձի կամ երրորդ անձի (ֆիզիկական կամ իրավաբանական) հետ կապված մասնավոր շահ (ուղղակի կամ անուղղակի շահագրգռվածություն), որն ազդում է կամ առերևույթ ազդում է կամ ողջամտորեն կարող է ազդել իր պաշտոնական լիազորությունների պատշաճ, օբյեկտիվ և անաչառ իրականացման վրա (առկա է բախում հանրային և մասնավոր շահերի միջև):

Շահերի փաստացի բախումը բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ հանրային ծառայողի լիազորությունների և մասնավոր շահերի այնպիսի բախում է, որի պայմաններում անձի մասնավոր շահերը ազդեցություն ունեն նրա լիազորությունների իրականացման վրա:

Շահերի առերևույթ (թվացյալ) բախման դեպքում առկա է մասնավոր շահ, որը ողջամտորեն կարող է դիտարկվել որպես բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ հանրային ծառայողի լիազորությունների իրականացման վրա ազդեցություն գործելու նպատակ հետապնդող՝ այդ թվում, եթե այդպիսի ազդեցությունը փաստացի բացակայում է կամ չի կարող լինել:

Շահերի հնարավոր (պոտենցիալ) բախման դեպքում բարձրաստիճան պաշտոնատար անձը կամ հանրային ծառայողն ունի այնպիսի մասնավոր շահ, որն ապագայում ողջամտորեն կարող է հանգեցնել շահերի բախման՝ կապված նրա լիազորությունների իրականացման հետ:

Մասնավոր շահերով առաջնորդվելը նշանակում է բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ հանրային ծառայողի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանա-

կում այնպիսի գործողություն կատարելը (անգործություն դրսևորելը) և (կամ) որոշում ընդունելը, որը հանգեցնում կամ նպաստում է կամ առերևույթ հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև գույքային կամ իրավական դրության բարելավման կամ պաշտոնում նշանակման:

Կոռուպցիոն գործոն՝ կոռուպցիոն իրավախախտումներ առաջացնող, նրանց տարածմանը նպաստող երևույթ կամ երևույթների համալիր:

Կոռուպցիոն իրավախախտում՝ կոռուպցիային բնորոշ հասկանիչներով օժտված գործողություն, որի համար համապատասխան նորմատիվային իրավական ակտերով նախատեսված է քաղաքացիական իրավական, կարգապահական, վարչական կամ քրեական պատասխանատվություն:

Կոռուպցիա՝ անձնական կամ այլ շահադիտական նպատակով, տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահում: Կոռուպցիան որպես վստահված իշխանության չարաշահում ունի մի շարք դրսևորումներ և բազում «նրբերանգներ», որոնցից են կաշառակերությունը՝ կաշառք ստանալը, տալը, կաշառքի միջնորդությունը, կաշառքի շորթումը, հովանավորչությունը, պաշտոնական դիրքի կամ կապերի չարաշահումը, պաշտոնական լիազորությունները չարաշահելը կամ անցնելը, պաշտոնական կեղծիքը, պաշտոնական դիրքի օգտագործմամբ պետական սեփականության յուրացումն ու վատնումը, ինչպես նաև պաշտոնեական այլ չարաշահումները:

Աշխատակցի կամ կազմակերպության ներկայացուցչի անձնական շահագրգռվածություն՝ աշխատակցի շահագրգռվածությունը պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում սեփական անձի կամ երրորդ անձանց համար դրամական միջոցներ, նյութական արժեքներ, այլ ունեցվածք ձեռք բերելու կամ ունեցվածքի հետ կապ ունեցող ծառայություններ ստանալու հնարավորություններ ունենալը:

Գործընկեր (կոնտրագենտ)՝ հայաստանյան կամ օտարերկրյա իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որի հետ կազմակերպությունը մտնում է պայմանագրային հարաբերությունների մեջ, բացառությամբ աշխատանքային հարաբերությունների:

Կազմակերպություն՝ իրավաբանական անձ անկախ սեփականության տեսակից, իրավական ձևից և ոլորտային պատկանելիությունից:

Առևտրային կաշառք՝ առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողին, արբիտրին, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան՝

գործառույթներ իրականացնող արբիտրին, աուդիտորին կամ փաստաբանին կաշառք տալը, այսինքն՝ ապօրինաբար այդ անձանց անձամբ կամ միջնորդի միջոցով նրանց կամ այլ անձի համար դրամական միջոցներ, գույք, գույքի նկատմամբ իրավունքներ, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը, առաջարկելը կամ տրամադրելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար:

Ներքին (լոկալ) կամ անհատական իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն՝ ԲՈՒՀ-երի գործող ներքին (լոկալ) կամ անհատական իրավական ակտերում կամ նրանց նախագծերում առկա կոռուպցիոն գործոնների հայտնաբերմանը, այդպիսի գործոնների ազդեցության սահմանափակմանը կամ վերացմանը նպատակաուղված գործունեություն:

Հակազդեցությունը կոռուպցիային՝ իշխանության պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության ինստիտուտների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց գործունեություն որն ուղղված է՝

ա) կոռուպցիայի կանխարգելմանը, այդ թվում կոռուպցիայի պատճառների բացահայտմանը և վերացմանը,

բ) կոռուպցիոն իրավախախտումների վերացմանը, կանխարգելմանը, բացահայտմանը և հետաքննմանը:

2. Հակակոռուպցիոն քաղաքականության նպատակները և խնդիրները Համալսարանում

2.1. Համալսարանում իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական նպատակները

- ա) Կոռուպցիայի հակազդեցության ծրագրի իրականացման ապահովում,
- բ) Համալսարանի ղեկավարության և աշխատակիցների կոռուպցիոն գործունեության մեջ ընդգրկման ռիսկերի նվազեցում,
- գ) Համալսարանում կոռուպցիային նպաստող պայմանների վերացում և կոռուպցիոն իրավախախտումների հնարավորության բացառում,
- դ) Անկախ զբաղեցրած պաշտոնից Համալսարանի աշխատակիցների, գործնկերների (կոնտրագենտներ) և այլ անձանց մոտ իր բոլոր դրսևորումներով կոռուպցիայի անընդունելիության մասին միասնական տեսակետի ձևավորում

ե) Քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն կոռուպցիայի հետ կապված բացասական երևույթներից, քաղաքացիների վստահության ամրապնդում Համալսարանի գործունեության նկատմամբ:

2.2. Հիմնական խնդիրները

- ա) Համալսարանի հակակոռուպցիոն գործունեության հիմնական սկզբունքների մշակում,
- բ) Համալսարանում կոռուպցիոն իրավախախտումների կանխարգելում,
- գ) Համալսարանում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման համար պատասխանատու պաշտոնատար անձանց նշանակում և նրանց լիազորությունների հստակեցում,
- դ) Համալսարանում կոռուպցիայի կանխարգելման և հակազդեցության գործնառնական ընդգրկված աշխատակիցների պարտականությունների հստակեցում,
- ե) Համալսարանում իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականության կիրառության ոլորտի և նրա մեջ ընդգրկված անձանց շրջանակի որոշում,
- զ) Համալսարանի կողմից իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների, ստանդարտների, ընթացակարգերի հաստատում,
- է) Համալսարանի կրթական գործնառնական մասնակիցների մոտ հակակոռուպցիոն գիտակցության ձևավորում,
- ը) Կոռուպցիոն իրավախախտումների կատարման համար պատասխանատվության անխուսափելիության ապահովում,
- թ) Համալսարանում կառավարման արդյունավետության, կրթության որակի և մատչելիության բաձրացում,
- ժ) Համալսարանի կրթական գործունեության թափանցելիության ապահովում, քաղաքացիների իրավունքների ապահովում Համալսարանի գործունեության մասին սպառիչ տեղեկատվություն ստանալու առումով:

3. Կոռուպցիային հակազդեցության սկզբունքներ

Համալսարանում կոռուպցիային հակազդեցությունը իրականացվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

ա) **օրենսդրությանը և ընդունված նորմերին հետևելու սկզբունք՝** Համալսարանում իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության կողմից կնքված միջազգային պայմանագրերին, Հայաստանի Հանրապետության «Կրթության մասին» օրենքի և «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018թ. միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշմանը:

բ) **ղեկավարության անձնական օրինակի սկզբունք՝** Համալսարանի ղեկավարների կողմից բոլոր մակարդակներում կոռուպցիայի տարբեր ձևերի և արտհայատումների նկատմամբ անողոք վերաբերմունքի էթիկական ստանդարտների ձևավորում, օրինակ ծառայելով համալսարանի աշխատակիցների համար:

գ) **աշխատակիցների ընդգրկվածության սկզբունք՝** Համալսարանի աշխատակիցների ակտիվ մասնակցություն հասկոռուպցիոն քաղաքականության ստանդարտների ձևավորմանը և իրականացմանը անկախ պաշտոնից:

դ) **հակակոռուպցիոն միջոցառումների համաչափության սկզբունքը կոռուպցիոն ռիսկերին՝** հակակոռուպցիոն համալիր միջոցառումների մշակում և իրականացում, կոռուպցիոն գործնթացներում Համալսարանի ընդգրկվածության նվազեցում:

ե) **հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետության սկզբունք՝** Համալսարանում ցածր ինքնարժեք ունեցող, հեշտ իրականացվող և արդյունավետ հակակոռուպցիոն միջոցառումների կիրառում:

զ) **պատասխանատվության և պատժի անխուսափելիության սկզբունք՝** Համալսարանի աշխատակիցների պատժի անխուսափելիություն անկախ պաշտոնից, աշխատանքային ստաժից և այլ պայմաններից պաշտոնեական պարտականություններ կատարելիս կոռուպցիոն իրավախախտումներ կատարելու դեպքում, ինչպես նաև Համալսարանի ղեկավարության անձնական պատասխանատվություն ներկազմակերպչական հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման համար:

է) **մշտական հսկողության և պարբերական մոնիտորինգի սկզբունք՝** ներդրված հակակոռուպցիոն ստանդարտների իրագործման արդյունավետության պարբերական մոնիտորինգ և մշտական հսկողություն:

ը) **թափանցիկության սկզբունք՝** գործնկերների և հասարակության իրազեկումը Համալսարանում ընդունված հակակոռուպցիոն ստանդարտների մասին:

4. Համալսարանում իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտը և այդ քաղաքականության մեջ ընդգրկված անձանց շրջանակը

4.1. Համալսարանում իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականությունը ընգրկում է հետևյալ անձանց շրջանակ՝

ա) վարչական անձնակազմ (ռեկտոր, պրոռեկտորներ, վարչությունների և ծառայությունների ղեկավարներ),

բ) պրոֆեսորադասիտական և օժանդակ անձնակազմ,

գ) համալսարանի այլ աշխատակիցներ,

դ) համալսարանում ուսուցանվող առույտներ:

4.2. Սույն հակակոռուպցիոն քաղաքականության պահանջները կարող են տարածվել նաև այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վրա, որոնց հետ Համալսարանը մտնում է պայմանագրային հարաբերությունների մեջ, եթե դա նախատեսված է Համալսարանի կողմից տվյալ անձանց հետ կնքված պայմանագրերով:

5. Համալսարանում իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականության համար պատասխանատու պաշտոնատար անձանց և Համալսարանի աշխատակիցների պարտականությունները կապված կոռուպցիայի հակազդեցության և կոռուպցիայի կանխարգելման հետ

5.1. Համալսարանի ռեկտորը պատասխանատու է Համալսարանում կոռուպցիայի կանխարգելմանը ուղղված ծրագրի իրականացման համար:

5.2. Համալսարանի ռեկտորը ելնելով Համալսարանի խնդիրներից, գործունեության յուրահատկություններից և հաստիքացուցակից նշանակում է հակակոռուպցիոն քաղաքականության իր գործման համար պատասխանատու անձ, կամ մի քանի անձանց:

5.3. Հակակոռուպցիոն քաղաքականության իրագործման համար պատասխանատու անձանց հիմնական պարտականությունները՝

ա) Համալսարանում կոռուպցիային հակազդելու խնդիրների վերաբերյալ որոշում կայացնելու համար առաջարկությունների նախապատրաստում,

բ) Համալսարանում կոռուպցիոն ռիսկերի, կոռուպցիային նպաստող պայմանների և պատճառների վերացմանը ուղղված առաջարկությունների նախապատրաստում,

զ) կոռուպցիայի կանխարգելմանը ուղղված տեղական նորմատիվային ակտերի նախագծերի մշակում և ռեկտորի կողմից հաստատում,

դ) Համալսարանում աշխատակիցների կողմից կատարվող կոռուպցիոն իրավախտումների բացահայտմանը ուղղված հսկողական միջոցառումների անցկացում,

ե) կոռուպցիոն ռիսկերի գնահատման իրականացում,

զ) Համալսարանի աշատակիցների, գործնկերների կողմից կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ հայտարարությունների ընդունում և քննարկում,

է) շահերի բախման մասին հայտարարությունների լրացմանը և քննարկմանը ուղղված աշխատանքների կազմակերպում,

ը) կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիային հակազդեցության հարցերի վերաբերյալ ուսուցանող միջոցառումների կազմակերպում և աշխատակիցների անհատական խորհրդատվության անցկացում,

թ) կոռուպցիայի կանխարգելմանը և կոռուպցիային հակազդեցությանը նվիրված միջոցառումների կազմակերպում,

ժ) Համալսարանի աշխատակիցների համար անհատական խորհրդատվության անցկացում,

ի) Համալսարանում անցկացվող հակակոռուպցիոն միջոցառումների արդյունքների գնահատում և Համալսարանի ռեկտորի համար համապատասխան նյութերի պատրաստում:

5.4. Համալսարանի բոլոր աշխատակիցները անկախ պաշտոնից և աշխատանքային ստաժից իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս պետք է՝

ա) ղեկավարվեն Համալսարանում իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականության դրույթներով և հետևողականորեն կատարեն առաջադրված պահանջները,

բ) խուսափեն կոռուպցիոն իրավախախտում կատարելուց,

գ) խուսափեն այնպիսի վարքագծից, որը շրջապատող մարդկանց կողմից կարող է մեկնաբանվել որպես կոռուպցիոն իրավախախտում կատարելու կամ կոռուպցիոն իրավախախտմանը մասնակցելու պատրաստակամություն,

դ) անհապաղ հայտնեն վերադասին (հակակոռուպցիոն քաղաքականության իրագործման համար պատասխանատու անձին) այլ անձանց կողմից Համալսարանի աշխատակցին կոռուպցիոն իրավախախտում կատարելու դրդման դեպքերի մասին,

ե) անհապաղ հայտնեն վերադասին (հակակոռուպցիոն քաղաքականության իրագործման համար պատասխանատու անձին) Համալսարանի այլ աշխատակիցների, գործընկերների կողմից կատարված կոռուպցիոն իրավախախտումների դեպքերի մասին,

զ) անհապաղ հայտնեն վերադասին կամ այլ պատասխանատու անձին այլ անձի մոտ շահերի բախման ծագման հնարավորության կամ շահերի բախման ծագած դեպքերի մասին:

6. Կոռուպցիոն իրավախախտումների կանխարգելման հիմնական միջոցառումները

Կոռուպցիոն իրավախախտումների կանխարգելումը իրականացվում է հետևյալ միջոցառումներ իրականացնելիս՝

ա) հակակոռուպցիոն ծրագրերի մշկում և իրագործում,

բ) իրավական ակտերի կամ նրանց նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության անցկացում,

գ) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցների կիրառում:

7. Հակակոռուպցիոն քաղաքականության ռազմավարության իրագործման միջոցառումների պլան

7.1. Համալսարանում հակակոռուպցիոն քաղաքականության ռազմավարության իրագործման միջոցառումների պլանը ապահովում է իրավական, տնտեսական կրթական, դաստիարակչական, կազմակերպչական և այլ միջոցների համաձայնեցված կիրառումը, որոնք ուղված են Համալսարանում կոռուպցիային հակազդեցությանը:

7.2. Հակակոռուպցիոն քաղաքականության ռազմավարության իրագործման միջոցառումների պլանի մշակումը և իրագործումը կատարվում է Համալսարանի կողմից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

8. Համալսարանում կողմից իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների պլան

8.1. Նորմատիվային բազայի ապահովում, վարքի ստանդարտների հաստատում

ա) Աշխատակիցների և ուսանողների էթիկայի կանոնակարգի մշակում և հաստատում.

բ) Շահերի բախման հայտարարարագրի ձևի մշակում և ներդնում.

գ) Աշխատանքային բնույթի նվերներով և աշխատանքային բնույթի հյուրընկալության նշաններով փոխանակումը կարգավորող կանոնակարգի մշակում և ընդունում.

դ) Տնտեսական գործունեության հետ կապված պայմանագրերի մեջ ստանդարտ հակակոռուպցիոն վերապահության ներդրում:

ե) Աշխատակիցների աշխատանքային պայմանագրերի մեջ հակակոռուպցիոն բնույթի դրույթների ներդրում:

8.2. Հատուկ հակակոռուպցիոն միջոցառումների մշակում և ներդրում

ա) Համալսարանը ներդրում է աշխատակիցների կողմից ուսումնական հաստատության ղեկավարության իրազեկման կարգը նրանց հայտնի դարձաց այլ աշխատակիցների կամ գործնկերների կողմից կատարված կոռուպցիոն իրավախատումների դեպքերի մասին, կամ այլ անձանց կողմից աշխատակիցներին կոռուպցիոն իրավախախտում կատարելու դրդման դեպքերի մասին:

բ) Ներդրում է աշխատակիցների կողմից ղեկավարության իրազեկման կարգը շահերի բախման մասին և այդ իրավիճակի լուծման ուղիների մասին:

գ) Համալսարանում աշխատակիցները յուրաքանչյուր տարի լրացնում են շահերի բախման հայտարարագիր:

դ) Համալսարանում պարբերաբար անհրաժեշտ է իրականացնել հակակոռուպցիոն ռիսկերի գնահատում և մշակել համապատասխան հակակոռուպցիոն միջոցառումներ:

8.3. Աշխատակիցների ուսուցանում և իրազեկում

ա) Համալսարանի աշխատակիցներին պարբերաբար անհրաժեշտ է ծանոթացնել այն նորմատիվային փաստաթղթերի հետ որոնք կարգավորում են կոռուպցիայի կանխարգելման խնդիրները բարձրագույն կրթության ոլորտում:

բ) Աշխատակիցների համար անհրաժեշտ է պարբերաբար անցկացնել ուսուցանող միջոցառումներ կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիային հակազդեցության խնդիրների վերաբերյալ:

գ) Անհրաժեշտ է պարբերաբար անցկացնել աշխատակիցների անհատական խորհրդատվություններ հակակոռուպցիոն կանոնակարգերի և ստանդարտների կիրառման հարցերով:

8.4. Համալսարանում ներքին վերահսկողության և աուդիտի հակակոռուպցիոն քաղաքականության պահանջներին համապատասխանության ապահովում

ա) Ներքին կանոնակարգերի մշտական վերահսկողության իրականացում:

բ) Հաշվապահական հաշվառման տվյալների մշտական վերահսկողության իրականացում, հաշվապահական հաշվառման առաջնային փաստաթղթերի հավաստիության առումով.

գ) Կոռուպցիոն ռիսկեր պարունակող ոլորտների ծախսերի հիմնավորվածության մշտական վերահսկողություն (բարեգործություն, արտաքին խորհրդատուների վարձատրում, ներկայացուցչական ծախսեր).

դ) Փորձագետների ներգրավում.

ե) Արտաքին աուդիտի պարբերական անցկացում.

զ) Անկախ փորձագետների ներգրավում հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետության գնահատման համար:

8.5. Հակակոռուպցիոն գործունեության իրականացման արդյունքների գնահատում և հաշվետվության ներկայացում.

ա) Հակակոռուպցիոն գործունեության արդյունավետության մշտական գնահատում.

բ) Հակակոռուպցիոն գործունեության իրականացման և արդյունավետության մասին հաշվետվության մշակում:

9. Կոռուպցիոն ռիսկերի գնահատում

9.1. Կոռուպցիոն ռիսկերի գնահատումը կարևոր նպատակետ է հանդիսանում Համալսարանի գործունեության մեջ այն ոլորտների և գործնթացների հայտնաբերման համար, որտեղ բարձր է աշխատակիցների կողմից կոռուպցիոն իրավախախտումներ կատարելու ռիսկը ինչպես անձնական շահի այնպես էլ Համալսարանի շահի համար:

9.2. Կոռուպցիոն ռիսկերի գնահատումը հանդիսանում է հակակոռուպցիոն քաղաքականության կարևորագույն բաղադրիչ, այն թույլ է տալիս ապահովել իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների համապատասխանությունը համալսարանի գործունեության յուրահատկություններին և ռացիոնալ օգտագործել կոռուպցիայի կանխարգելմանը ուղղված ռեսուրսները:

9.3. Կոռուպցիոն ռիսկերի գնահատումը համալսարանում իրականացվում է պարբերաբար:

9.4. Կոռուպցիոն ռիսկերի գնահատման կարգ.

ա) Համալսարանի գործունեությունը բաժանել առանձին ոլորտների.

բ) յուրաքանչյուր ոլորտի համար գտնել այն գործնթացները, որտեղ բարձր է կոռուպցիոն իրավախախտումներ կատարելու հնարավորությունը.

գ) յուրաքանչյուր գործնթացի համար, որի իրագործումը կապված է կոռուպցիոն ռիսկերի հետ կազմել հնարավոր կոռուպցիոն իրավախախտումների նկարագրություն, ներառելով այն շահի կամ առավելության բնութագիրը, որն կարող է ստանալ համալսարանը կամ նրա առանձին աշխատակիցները կոռուպցիոն իրավախախտում կատարելիս:

9.5. Կատարված վերլուծության հիման վրա կազմել համալսարանի կոռուպցիոն ռիսկերի քարտեզ, որն ներառում ռիսկային գործնթացների և հնարավոր կոռուպցիոն իրավախախտումների համապարփակ նկարագրություն:

9.6. Յուրաքանչյուր ռիսկային գործնթացի համար մշակել կոռուպցիոն ռիսկերի վերացմանը կամ նվազեցմանը ուղղված միջոցառումների համալիր: Կապված կոնկրետ գործնթացի յուրահատկությունից միջոցառումների պլանը կարող է ներառել.

ա) Ռիսկային գործնթացում աշխատակիցների կողմից կատարվող գործողությունների և ժամկետների մանրամասն կանոնակարգմանը ուղղված միջոցառումներ.

բ) Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների միջև իրավասությունների վերաբաշխում.

գ) ընդունված որոշումների համար լրացուցիչ հաշվետվության ձևերի մշակում:

10. Հակակոռուպցիոն մեխանիզմների ներդրում

10.1. Համալսարանի աշխատակիցների հետ պարբերական հանդիպումների անցկացում նվիրված կրթության ոլորտում հակակոռուպցիոն քաղաքականության իրագործմանը:

10.2. Համալսարանի վարչական և դասախոսական կազմի շրջանում բացատրական և դաստիարակչական աշխատանքների ուժեղացում քննությունների, ստուգարքների հանձնման ընթացքում, կուրսային աշխատանքների պաշտպանության ժամանակ դրամաշորթության և կաշառակերության դրսևորումների անընդունելիության վերաբերյալ:

10.3. Խիստ հաշվառման փասթաթղթերի վարման հսկողության ուժեղացում:

10.4. Համալսարանում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացմանը ուղղված աշխատանքների ընթացիկ վիճակի և կոռուպցիային հակազդեցությանը ուղղված միջոցառումների արդյունավետության վերլուծություն: Ուսանողների շրջանում կոռուպցիոն իրավախախտումների բացահայտմանը ուղղված գաղտնի անկետավորման արդյունքների

ամփոփում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման համար պատասխանատու աշխատանքային խմբի նիստերի ժամանակ:

10.5. Քաղաքացիների կողմից տրված կոռուպցիոն իրավախախտումների դեպքերի վերաբերյալ դիմումների քննարկում: Կազմակերպչական ստուգումների ընթացքում նման դեպքերի կանխարգելմանը ուղղված միջոցառումների մշակում:

11. Տեղական իրավական ակտերի և (կամ) նրանց նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննություն

11.1. Տեղական իրավական ակտերի և (կամ) նրանց նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննությունը իրականացվում է ակտերում այն անկատար դրույթների կատարելագործման նպատակով, որոնք կարող են նպաստել կոռուպցիոն ռիսկերի բարձրացմանը:

11.2. Տեղական իրավական ակտերի և (կամ) նրանց նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննությունը իրագործվում է համալսարանի ռեկտորի որոշմամբ եթե կան հիմնավորված կասկածներ այդ ակտերում կամ նախագծերում կոռուպցիոն գործոնների առկայության մասին

11.3. Ուսանողները, ուսանողների ծնողները, համալսարանի աշխատակիցները կարող են դիմել հակակոռուպցիոն աշխատանքային խմբի ղեկավարին խնդրելով անցկացնել գործող իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն:

11.4. Հակակոռուպցիոն փորձաքննության առարկա են հանդիսանում Համալսարանի կողմից ընդունվող լոկալ իրավական ակտերը կամ նրանց նախագծերը (կանոնադրություններ, հրամաններ, կանոնակարգեր):

11.5. Կոռուպցիոն գործոններ են համարվում լոկալ ակտերի կամ նրանց նախագծերի այն դրույթները, որոնք պարունակում են հայացեղության չհիմնավորված լայն սահմաններ, ընդահանուր կանոններից չհիմնավորված բացառություններ, անորոշ, կատարման համար բարդ պահանջներ աշխատակիցների, ուսուցանվողների և այլ կազմակերպությունների նկատմամբ:

11.6. Լոկալ ակտերի հակակոռուպցիոն փորձաքննությունը իրագործվում է ներքին իրավական փորձաքննության ընթացքում:

11.7. Լոկալ ակտը մշակող կառուցվածքային ստորաբաժանումը ապահովում է նրա նախագծում կոռուպցիոն գործոնների բացակայությունը:

11.8. Լոկալ ակտի նախագիծը ստորագրվում է այն մշակող ստորաբաժանման ղեկավարի կողմից և բոլոր շահագրգռված ստորաբաժանումների հետ խորհրդակցելուց հետո ուղարկում է հակակոռուպցիոն աշխատանքային խումբ, որն հինգ աշխատանքային օրվա ընթացքում

իրականացնում է նախագծի հակակոռուպցիոն փորձաքննություն: Ակտի նախագծում կոռուպցիոն ռիսկեր պարունակող դրույթների բացակայության դեպքում այն անցնում է հաստատման համար նախատեսված ընթացակարգով:

11.9. Եթե լրկալ ակտի նախագծում հայտնաբերվել են կոռուպցիոն գործոններ, այն ուղարկվում է համապատասխան ստորաբաժանում փոփոխություններ կատարելու նպատակով:

11.10. Ավելի վաղ ընդունված լրկալ ակտերի հակակոռուպցիոն փորձաքննությունը կատարվում է գործող ակտերի կիրառման մոնիտորինգի ժամանակ Համալսարանի համապատասխան ստորաբաժանումների և պաշտոնատար անձանց կողմից համաձայն իրենց իրավասությունների:

11.11. Տեղական ակտերը, որոնք ունեն կոռուպցիոն ռիսկեր պարունակող դրույթներ ուղարկվում են հակակոռուպցիոն աշխատանքային խումբ համապատասխան փորձաքննություն անցնելու նպատակով, իսկ հակակոռուպցիոն փորձաքննության արդյունքների հիման վրա նրանք կրկին ուղարկվում են համապատասխան ստորաբաժանումներ թերությունները վերացնելու համար:

12. Աշխատանքային բնույթի նվերներով և հյուրընկալության նշաններով փոխանակման կանոններ

12.1. Համալսարանը մտադիր է պահպանել կոռպորատիվ կուլտուրան, որտեղ աշխատանքային բնույթի նվերները, կորպորատիվ հյուրընկալությունը դիտարկվում են միայն որպես այլ հաստատությունների հետ երկկողմանի հարաբերությունների հաստատման և ամրապնդման գործիք:

12.2. ՀՀ հակակոռուպցիոն օրենսդրության դրույթների խախտումը բացառելու, երրորդ անձանց կողմից Համալսարանի ղեկավարության և աշխատակիցների գործունեության վրա իրենց աշխատանքային պարտականությունների կատարելու ընթացքում ազդեցություն թույլ չտալու, աշխատանքային նվերներով փոխանակվելու, ներկայացուցչական միջոցառումներ կազմակերպելու և այդ միջոցառումներին մասնակցելու ժամանակ չարաշահումները թույլ չտալու, կազմակերպության իմջային կորուստները նվազեցնելու նպատակով Համալսարանը մշակում աշխատանքային բնույթի նվերներով և հյուրընկալության նշաններով փոխանակվելու կանոնակարգ:

12.3. Նվերները որոնք Համալսարանի անունից կարող են փոխանցվել և ընդունվել, ինչպես նաև աշխատանքային հյուրընկալության ծախսերը պետք է համապատասխանեն հետևյալ չափանիշներին՝

– պետք է ուղիղ կապ ունենան Համալսարանի կանոնադրական նպատակների, հիշատակի օրերի, հոբելյանների, համագգային տոների հետ.

– պետք է լինեն ողջամտորեն հիմնավորված, համաչափ և չհանդիսանան ճոխության առարկա.

– իրենից չներկայացնեն քողարկված վարձատրում՝ ծառայության, գործողության, անգործության, թողտվության, հովանավորչության, իրավունքների տրամադրման, ձեռնտու որոշումների կայացման դիմաց, ընդունող կողմի վրա ազդեցություն գործադրելու համար.

– չստեղծեն ռիսկեր Համալսարանի բարի համբավի համար.

– չհակասեն Համալսարանի հակակոռուպցիոն քաղաքականությանը, աշխատակիցների էթիկայի կանոնակարգին, Հայաստանի օրենսդրությանը և բարոյականության նորմերին.

– նվերները կամ ուշադրության հատուկ նշանները չպետք է ընդունող կողմին դնեն կախյալ վիճակի մեջ, չպետք է հանգեցնեն փոխադարձ պարտավորությունների առաջացմանը կամ ազդեցություն գործեն ընդունող կողմի դատողությունների օբյեկտիվության և որոշումների վրա:

Անթույլատրելի է Համալսարանի, նրա աշխատակիցների և ներկայացուցիչների անունից փոխանցել կամ ընդունել նվերներ դրամական միջոցների (կանխիկ, ոչ կանխիկ)անկախ տարադրամից, բաժնետոմսերի և այլ արժեթղթերի ձևով: Նվերները չպետք է օգտագործվեն կաշառք տալու և ստանալու համար:

12.4. Նվերները փոխանցվում են և ընդունվում են միայն Համալսարանի անունից: